14

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՎԻՎ/57/2020

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան 18-ը սեպտեմբերի 2020թ.

Կոռուպցիայի կանխարգելման Հանձնաժողովը, կազմով՝ Հ. Հարությունյան, Լ. Ալեքսանյան, Ն. Համբարձումյանի (այսուհետ՝ Հանձնաժողով),

2020թ. սեպտեմբերի 18-ին քննելով ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Աթաբեկյանի կողմից հայտարարագրման ենթակա տվյալները 2019 թվականի գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրում չներկայացնելու փաստի հիմքով 2020 թվականի օգոստոսի 14-ին հարուցված ՎԻՎ/57/2020 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը,

ՊԱՐԶԵՑ

I. Վարչական իրավախախտումների վերաբերյալ գործի վարույթի նախապատմությունը.

1. 2020թ. հուլիսի 30-ին «Հետաքննող լրագրողներ» հասարակական կազմակերպության լրագրող Սամսոն Մարտիրոսյանի կողմից Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով (այսուհետ՝ Հաձնաժողով) է ներկայացվել դիմում, որով հայտնել է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Աթաբեկյանի 2019թ. գույքի, եկամուտների և շահերի հայտարարգրում եկամուտների բաժինը լրացված չէ:

2. Հանձնաժողովն, իրականացնելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 25-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով իրեն վերապահված գործառույթները, պարզել է, որ ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր Վարդան Աթաբեկյանի կողմից 2020թ. մայիսի 31-ին

/5

ներկայացրած 2019թ. գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրում «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժինը առերևույթ լրացված չէ, ինչի առնչությամբ 2020 թվականի օգոստոսի 14-ին հարուցել է թիվ ՎԻՎ/57/2020 վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթը:

3. Նշված առերևույթ խախտումը արձանագրելու համար Հանձնաժողովի հայտարարագրման վարչության պետի կողմից կազմվել է ծանուցում և Վ. Աթաբեկյանը 2020թ. օգոստոսի 14-ին, ժամը՝ 11:30-ին հրավիրվել է Հանձնաժողով:

4. Վարդան Աթաբեկյանը սահմանված ժամին ներկայացել է Հանձնաժողով, որտեղ Վարդան Աթաբեկյանին բացատրվել են Վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի 267-րդ հոդվածով նախատեսված իր իրավունքներն ու պարտականությունները և հանձնվել է նույն հոդվածով սահմանված իրավունքների ու պարտականությունների վերբերյալ հուշաթերթիկը:

5. Վարդան Աթաբեկյանը տվել է գրավոր բացատրություն, հայտնելով, որ Հայտարարագրի դրամական միջոցներ բաժնում լրացնելով աշխատավարձի վճարման արդյուքում գոյացած միջոցները, կարծել է, որ եկամուտներ բաժինը վերաբերում է այլ եկամուտներին և չունենալով այլ եկամուտ չի լրացրել եկամուտներ բաժինը:

6. 2020թ. օգոստոսի 14-ին կազմված արձանագրության հիման վրա նույն օրը Հանձնաժողովը կայացրել է վարչական իրավախախտման վերաբերյալ գործի վարույթ հարուցելու մասին թիվ 57/2020 վարույթը, որը ուղարկվել է Վ. Աթաբեկյանին:

7. Վարդան Աթաբեկյանին առաջարկվել է որոշումը ստանալուց հետո 3-օրյա ժամկետում ներկայացնել դիրքորոշում՝ գործը գրավոր ընթացակարգով քննելու վերաբերյալ: Միաժամանակ Վ. Աթաբեկյանը տեղեկացվել է, որ լրացուցիչ բացատրություն ներկայացնելու անհրաժեշտության դեպքում այն կարող է ներկայացվել Հանձնաժողովի պաշտոնական էլեկտրոնային՝ info@cpcarmenia.am, հասցեին:

8. Վարդան Աթաբեկյանը սահմանված ժամկետում Հանձնաժողովին տեղեկացրել է, որ ցանկանում է մասնակցել գործի քննությանը, ինչի կապակցությամբ 2020 թվականի սեպտեմբերի 18-ին հրավիրվել է նիստ, որի մասին Վ. Աթաբեկյանը պատշաճ կարգով տեղեկացվել է և ներկայացել է 2020 թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 11:00 գործի քննությանը:

II. Վարդան Աթաբեկյանի բացատրությունը.

9. 2020թ. օգոստոսի 14-ին թիվ ՎԻՎ/57/2020 վարչական վարույթի մասնակից Վարդան Աթաբեկյանը տվել է գրավոր բացատրություն, հայտնելով, որ դրամական միջոցները նշելով, եկամուտներ բաժինը չի լրացրել, կարծելով, որ այն վերաբերում է այլ եկամուտներին:

10. 2020 թվականի սեպտեմբերի 18-ին Վարդան Աթաբեկյանը պնդեց իր տված բացատրությունը և հավելեց, որ հայտարարագրման համակարգի բարդ լինելու պատճառով չի հասկացել հայտարարգրման ենթակա տվյալի լրացման պահանջը, ինչն էլ հանգեցրել է տվյալի անզգուշությամբ չհայտարարագրելուն: Տվյալը թաքցնելու մտադրություն չի ունեցել:

III.Գործի քննության ընթացքում հաստատված հանգամանքները.

11. Հանձնաժողովն, ուսումնասիրելով և վերլուծելով թիվ ՎԻՎ/57/2020 գործում առկա նյութերը, կատարելով գործի հանգամանքների քննություն, հաստատված է համարում, որ.

1) ՀՀ ազգային ժողովի պատգամավոր Վարդան Աթաբեկյանի 2019թ. գույքի, եկամուտների և շահերի տարեկան հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի, նրա ընտանիքի անչափահաս անդամների և խնամակալության կամ հոգաբարձության տակ գտնվող անձանց եկամուտները» բաժնում Վ. Աթաբեկյանը անզգուշությամբ չի հայտարարագրել իր եկամուտները(աշխատավարձը)՝ թույլ տալով Օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված (հայտարարատուի կողմից հայտարարագրում անզգուշությամբ սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը) վարչական իրավախախտում:
2) Ինչ վերաբերում է Վ. Աթաբեկյանի այն պնդմանը, թե չի պատկերացրել, որ եկամուտներ բաժնում պետք է նշվի նաև աշխատավարձը, ապա Հանձնաժողովը փաստում է, որ Վ. Աթաբեկյանը 2019 թվականի փետրվարի 28-ին ներկայացված պաշտոնական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների և փոխկապակցված անձանց հայտարարագրում լրացրել է աշխատանքի վարձատրությունից ստացված եկամուտը, այսինքն գիտակցել է, որ աշխատավարձը ևս եկամուտ է:

IV. Որոշումն ընդունելու իրավական հիմքերը.

3) Վարդան Աթաբեկյանը «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի ուժով հանդիսանում է գույքի, եկամուտների և շահերի հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձ:

17

4) «Հանրային ծառայության մասին» 34-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ Հայտարարատու պաշտոնատար անձի տարեկան հայտարարագիրը ներկայացվում է յուրաքանչյուր տարվա հունվարի 1-ից՝ տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ ընկած ժամանակահատվածի համար:

5) Նույն օրենքի օրենքի 41-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հայտարարագրման ենթակա են Հայաստանի Հանրապետության դրամով, արտարժույթով կամ բնամթերային (ոչ դրամական) ձևով ստացված աշխատանքի վարձատրությունը կամ դրան հավասարեցված այլ վճարումները:

6) ՀՀ Վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգրք) 169.28-րդ հոդվածի 5-րդ մասին համաձայն՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝ **սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից չորսհարյուրապատիկի չափով:**

7) «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՝Հանձնաժողովը Օրենսգրքով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ վարույթի արդյունքում ընդունում է որոշումներ, որոնք կարող են բողոքարկվել «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան՝ դատական կարգով:

8) Օրենսգրքի 244.17-րդ հոդվածի համաձայն՝ Օրենսգրքի 169.28-րդ հոդվածով նախատեսված վարչական իրավախախտումների վերաբերյալ գործերը քննում և վարչական տույժեր է նշանակում Հանձնաժողովը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, 26-րդ հոդվածով, Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 23-րդ հոդվածի 2-րդ կետով, 169.28-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.17-րդ հոդվածով, Հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Վարդան Աթաբեկյանի նկատմամբ կիրառել վարչական տույժ՝ նշանակելով տուգանք՝ ՀՀ Վարչական իրավախախտման վերաբերյալ օրենսգրքի 169.28-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տուգանքի նվազագույն՝ 200 000 (երկու հարյուր հազար) ՀՀ դրամի չափով՝ հայտարարատուի կողմից հայտարարագրում **անզգուշությամբ** սխալ կամ ոչ ամբողջական տվյալ ներկայացնելու համար՝ հաշվի առնելով նաև, որ չկան արարքը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներ:

2. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 305-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ խախտողի

կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում, իսկ այդ որոշումը բողոքարկելու դեպքում՝ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում: Տուգանքը պետք է վճարվի գանձապետական 900005001335 «Իրավախախտումների համար կիրառվող վարչական տուգանքներ և պատժամիջոցներ (Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողով)» հաշվեհամարին՝ վճարման անդորրագրի «նպատակ» դաշտում պարտադիր նշելով սույն որոշման համարը(ՎԻՎ/57/2020):

3. Տուգանքը նշանակելու մասին որոշումն իրավախախտում կատարած անձին հանձնելու օրվանից, իսկ տուգանքը նշանակելու մասին որոշումը բողոքարկելու դեպքում՝ բողոքն առանց բավարարման թողնելուց հետո տասնհինգ օրվա ընթացքում տուգանքը չվճարելու դեպքում, այն ենթակա է բռնագանձման օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Տուգանքը վճարելուց հետո Վարդան Աթաբեկյանին տրամադրել 7 աշխատանքային օր՝ գույքի, եկամուտների և փոխկապակցված անձնաց 2018 թվականի տարեկան հայտարարագրի «Հայտարարատու պաշտոնատար անձի եկամուտները հարկային տարում» բաժնում համապատասխան ուղղում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վարդան Աթաբեկյանին այն սահմանված կարգով հանձնելու (հանձնված համարվելու) հաջորդող օրվանից:

6. Սույն որոշումը կարող է բողոքարկվել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄՆԵՐ՝ **ՀԱՅԿՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

ՆԱՐԵԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ